Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Աբովյանի Ն. Վանյանի անվան թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսերենով ուսուցմամբ տարրական դասարանի դասվարի (22 դասաժամ), ռուսաց լեզվի և գրականության (11 դասաժամ), ֆիզկուլտուրայի (2 տեղ, 24 դասաժամ, ցանկալի է առարկան ռուսերենով դասավանդելու իմացությունը) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),

- 1 լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (ձև 5),

- այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում մինչև նոյեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2021 թ. նոյեմբերի 19-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի Ն. Վանյանի անվան թիվ 5 հիմնական դպրոցում, հասցեն՝ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Ռոսիա փող. 8/4:

Տեղեկությունների համար զանգահարել (060)74-07-14, (094)34-99-75 հեռախոսահամարներով: